

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

Շահինյան Տաթևիկ Վազգենի

**Բանկային ծառայությունների զարգացման
հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում**

Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության
սեղմագիր

ԵՐԵՎԱՆ-2022

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտում

Գիրական ղեկավար՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Վլադիմիր Լիպարիտի Չարուբյունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հայկ Գեղասիմի Մնացականյան

տնտեսագիտության թեկնածու
Արմեն Գառնիկի Հակոբյան

Առաջարար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022թ. մայիսի
19-ին, ժամը 14:00-ին Հայաստանի պետական տնտեսագիտական
հայասարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Տնտեսագիտության թիվ 014
մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025, ք. Երևան, Մ. Նալբանդյան 128
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ
Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022թ. ապրիլի 8-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



Տիգրան Սեդյոժայի Մարտիրոսյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արենախոսության թեմային արդիականությունը: Բանկային համակարգը, որպես տնտեսության կարգևորագույն օղակ առաջատար դեր է խաղում երկրի տնտեսական ներուժի բարձրացման գործում:

Բանկային ծառայությունների ներքին ու միջազգային շուկաներում օրեցօր աճող մրցակցությունը բանկերից պահանջում է փոխել իրենց գործունեության չափանիշները՝ հատկապես կապված նոր ծառայությունների մատուցման և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտության հետ:

Բանկային ծառայությունների տեսականու ընդլայնումն ու շուկայական մրցակցության շարունակական աճը անհրաժեշտություն են առաջացնում, որպեսզի տեղական բանկերը մեծ ակտիվություն ցուցաբերեն նորարարական գործունեության կայուն զարգացման գործում: Արդի զարգացումները պահանջում են բանկերին ներկայացվող սահմանափակումների վերանայում, բանկային գործունեության արդյունքների գնահատում, գործող օրենսդրական դաշտի կատարելագործում, ինչպես նաև բանկային ոլորտում առկա մրցակցային հարաբերությունների զարգացում ու առողջ մրցակցային պայմանների հաստատում:

Արդեն այսօր անհնար է պատկերացրել երկրի կայուն տնտեսական զարգացումն առանց բանկային համակարգում նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ ծառայությունների մատուցման:

Նորարարական բանկային ծառայությունների ներդրումն ու առկա ծառայությունների զարգացումը բանկային եկամուտների մեծացման ինչպես նաև ժամանակին համընթաց քայլով հաճախորդների պահանջմունքների բավարարման կարևորագույն աղբյուրներն են:

Բանկային ծառայությունների կատարելագործման, ինչպես նաև նորարարական ծառայությունների ձևավորման ու ներդրման հարցերը բանկային գործունեությանը վերաբերող տեղական աղբյուրներում քիչ ուսումնասիրված ոլորտներից է, որն էլ պայմանավորել է թեմայի ընտրության արդիականությունն ու բանկային նոր ծառայությունների ու տեխնոլոգիաների զարգացման տեսական և գործնական խնդիրների համապարփակ հետազոտության անհրաժեշտությունը:

Արենախոսության նպատակը և խնդիրները:

Արենախոսության հիմնական նպատակն է ՀՀ բանկային ծառայությունների ու դրանց զարգացման հեռանկարների ուսումնասիրությունը՝ ծառա-

յությունների տեսականու ընդլայնման և դրանց ծախսատարության կրճատման համատեքստում:

Նշված նպատակին հասնելու համար կարևորվել են հետևյալ խնդիրները.

- Մասնագիտական գրականության, ինչպես նաև առկա վերլուծությունների հիման վրա պարզաբանել բանկային ծառայությունների տնտեսական բովանդակությունը, դրանց դերն ու նշանակությունը ՀՀ տնտեսության մեջ:
- ՀՀ բանկային ոլորտի հիմնական ֆինանսական ցուցանիշների հետազոտության արդյունքում բացահայտել բանկերի կայունության ապահովմանն ուղղված ՀՀ ԿԲ միջոցառումների արդյունավետությունը:
- Բանկային ծառայությունների ձևավորման ու զարգացման միջազգային փորձի ուսումնասիրությունների հիման վրա քննարկել ՀՀ բանկային համակարգի բարեփոխման ուղիները:
- Առևտրային բանկերի ակտիվային ու պասիվային գործառնությունների էության քննարկման ու վերլուծությունների հիման վրա դիտարկել դրանց կատարելագործմանն ուղղված հնարավոր ուղիները:
- ՀՀ բանկային համակարգում առաջացող հիմնական ռիսկերի բացահայտման ու հետազոտությունների հիման վրա քննարկել ռիսկերի կառավարմանն ուղղված ՀՀ ԿԲ ռազմավարական մոտեցումները:
- ՀՀ բանկերի կողմից իրականացվող լիզինգային և ֆակտորինգային ծառայությունների ուսումնասիրությունների, ինչպես նաև մեր կողմից իրականացված սոցիոլոգիական հարցումների հիման վրա առաջարկել մատուցվող ծառայությունների կատարելագործման նոր մոտեցումներ,
- Ներկայացնել բլոկչեյն և բաց բանկինգ նորարարական տեխնոլոգիաների կիրառության առավելություններն ու հիմնավորել բանկային ծառայությունների կատարելագործման ու զարգացման գործում նորարարական տեխնոլոգիաների կիրառության անհրաժեշտությունը:

Արժենախոսության գիտական նորույթը: Հետազոտությունների ու վերլուծությունների հիմնական արդյունքներն ու գիտական նորույթները հետևյալներն են.

- ✓ ՀՀ 17 առևտրային բանկերի, ինչպես նաև 384 առևտրային կազմակերպությունների շրջանում իրականացված սոցիոլոգիական հարցումների հիման վրա ուսումնասիրվել են

լիզինգի, մասնավորապես՝ գործառնական լիզինգի պահանջարկի առկայությունը շուկայում, բացահայտվել են դրա ներդրման համար շուկայում առկա բացերը և ստացված արդյունքների հիման վրա առաջարկվել են ոլորտի կարգավորման ուղիներ:

- ✓ Ծառայությունների ծախսատարության և դրանցից ստացվող եկամտաբերության համեմատական վերլուծության հիման վրա վեր են հանվել ՀՀ բանկային ոլորտում ակտիվների մեծությամբ առաջատար երեք բանկերում առկա շեղումները, և մշակվել է դրանց շտկան համար բանկային ծառայությունների ինքնարժեքի հաշվարկման նոր մոտեցում:
- ✓ Բանկային ծառայությունների մատուցման համաշխարհային փորձի համակողմանի ուսումնասիրման հիման վրա հիմնավորվել է նորարարական տեխնոլոգիաների ներդրման նպատակահարմարությունը՝ ՀՀ բանկերի կողմից մատուցվող ծառայությունների ծախսատարության նվազեցման և եկամտաբերության աճի համատեքստում:

Արենախոսության թեմայի ուսումնասիրվածության

աստիճանը: Հայկական և արտասահմանյան հեղինակները բանկային գործին վերաբերող իրենց աշխատություններում առանձնակի ուշադրություն են դարձնում բանկերի գործունեության արդյունավետության, տրամադրվող ծառայությունների որակի կատարելագործման, ինչպես նաև նոր ծառայությունների ներդրման հարցերին:

Բանկային ծառայությունների էության ու կատարելագոծման հեռանկարների ուսումնասիրության հարցում իրենց մեծ ներդրումն են ունեցել այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Օ. Ի. Լավրուշինը, Ի. Տ. Բալաբանովը, Ե. Ֆ. Ժուկովը, Ս. Ն. Բաբիչևը, Լ. Վ. Լյամինը, Շ. Հեֆֆերնանը, Լ. Հ. Բադանյանը, Բ. Ասատրյանը և այլք: ՀՀ-ում բանկային ծառայությունների զարգացման ու արդյունավետության բարձրացման հարցերին իրենց հետազոտություններում անդրադարձել են նաև Օ. Ռ. Փափազյանը, Ա. Է. Ամիրյանն ու Վ.Լ Վարդանյանը: ՀՀ բանկային համակարգում ֆինանսական նորաստեղծությունների ներդրմանն ու դրանց արդյունավետությանն է անդրադարձել նաև Ա. Զ. Կիրակոսյանը:

Նշված աշխատություններում ՀՀ բանկային ծառայությունների հարցը դիտարկվել է ընդհանուր դրվածքի կտրվածքով: Սույն ատենախոսության մեջ այն դարձել է համակողմանի քննության առարկա՝ իր նշանակության ու զարգացման հեռանկարային հարցերի վերաբերյալ նոր մոտեցումներով:

Արենախոսության ուսումնասիրության օբյեկտն ու առարկան:

Հետազոտության օբյեկտը ՀՀ բանկային գործունեությունն ու բանկային ծառայությունների շուկան է:

Հետազոտության առարկան նորարարությունների կիրառմամբ պայմանավորված բանկային ծառայությունների կատարելագործման գործընթացը:

Արենախոսության տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության համար տեսական, մեթոդաբանական ու տեղեկատվական հիմք են հանդիսացել հայ և արտասահմանյան գիտնականների ուսումնասիրությունները, ՀՀ օրենսդրական և նորմատիվային ակտերն ու միջազգային գիտաժողովների նյութերը:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ ԿԲ հրապարակումներն ու տվյալների բազաները, առևտրային բանկերի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները, միջազգային կազմակերպությունների հրապարակումները, տարբեր փորձագետների կարծիքները, ինչպես նաև էլեկտրոնային նյութեր (ՌԴ, ԱՄՆ ու Մեծ Բրիտանիայի վերահսկիչ մարմինների ու բանկերի պաշտոնական կայքէջերը):

Արենախոսության տեսական ու գործնական նշանակությունը: Արենախոսությունում իրականացված վերլուծությունների ու հետազոտությունների արդյունքները կարող են օգտակար լինել ՀՀ բանկային համակարգի կատարելագործման, ինչպես նաև տրամադրվող բանկային ծառայությունների արդյունավետության բարձրացման ու նոր տեխնոլոգիաների ներդրման հետ կապված հիմնախնդիրների լուծման համար:

Արենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Արենախոսության հիմնադրույթներն ու հետազոտության արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտում, ինչպես նաև միջազգային գիտաժողովներում: Հետազոտության կարևոր դրույթներն ու արդյունքները արտացոլվել են հեղինակի կողմից հրապարակված 14 գիտական հոդվածներում:

Արենախոսության կառուցվածքը և ծավալը: Արենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Այն շարադրված է համակարգչային շարվածքով 139 էջի վրա՝ առանց հավելվածների, պարունակում է 24 գծապատկեր, 7 աղյուսակ և 2 նկար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ


Ներածությունում հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպվել են նպատակը և խնդիրները, հստակեցվում են ատենախոսության օբյեկտը և առարկան, ներկայացված են հիմնական արդյունքները և գիտական նորոյթը, դրանց տեսական ու գործնական նշանակությունը, ինչպես նաև արդյունքների հրապարակումը, ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Աղենախոսության առաջին՝ «Բանկային ծառայությունների տնտեսական բովանդակությունը և կազմակերպման ձևերը» գլխում, համառոտ կերպով ներկայացված է բանկային ծառայությունների տնտեսական բովանդակությունը, վերլուծված են ՀՀ բանկային ոլորտը բնութագրող հիմնական ֆինանսական ցուցանիշները, ինչպես նաև ուսումնասիրված է բանկային ծառայությունների առաջացման ու զարգացման միջազգային փորձը: Առաջին գլխում ներկայացված է նաև «բանկային ծառայություն», «բանկային գործառնություն» և «բանկային արտադրանք» հասկացությունների տարբեր հեղինակների մոտեցումները, իսկ այնուհետև ձևավորվել է սեփականը:

Աղենախոսության երկրորդ՝ «ՀՀ բանկային համակարգում մատուցվող ծառայությունների քննական վերլուծություն» գլխում, համապարփակ կերպով ուսումնասիրվել են առևտրային բանկերի ակտիվային ու պասիվային գործառնությունները, վերլուծվել են լիզինգային և ֆակտորինգային ծառայություններն ու դրանց զարգացման հնարավորությունները, ինչպես նաև բացահայտվել են ՀՀ բանկային համակարգում առկա ռիսկերն ու դրանց արդյունավետ կառավարման մեխանիզմները:


Ներկայացվել է անցկացված սոցիոլոգիական հարցման արդյունքները, որի արդյունքում պարզվել է, որ գործող 17 բանկերից լիզինգային ծառայություններ են մատուցում միայն 5-ը՝ «Արարատբանկը», «ՎՏԲ-Հայաստան Բանկը», «Ամերիաբանկը», «Կոնվերս բանկն» ու «Հայթիզնեսբանկը»: Հարցումների նման պատկերը ոլորտի առավել խորքային ուսումնասիրության անհրաժեշտություն առաջացրեց, պարզելու՝ ՀՀ լիզինգային ծառայությունների շուկայում բանկերի փոքր մասնաբաժնի պատճառները: Այդ նպատակով իրականացվել է հարցում ՀՀ-ում գրանցված և գործունեություն իրականացնող կազմակերպությունների շրջանում: 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ-ում փաստացի գրանցված 188093 կազմակերպություններից, հարցմանը մասնակցել են 384-ը:

Կազմակերպությունների լիզինգային ծառայություններից չօգտվելու պատասխանները խմբավորվել են հիմնական պատճառների, որոնք ներկայացված են գծապատկեր 1-ում:




Գծապատկեր 1. Լիզինգային ծառայություններից չօգտվելու պատճառները

Իրավիճակի վերաբերյալ առավել հստակ ու ամբողջական պատկերացում կազմելու համար հարցումներ են կազմակերպվել նաև ՀՀ-ում գործող 17 առևտրային բանկերի շրջանում՝ պարզելու լիզինգային ծառայություններ չմատուցելու պատճառները, իսկ նման ծառայություններ առաջարկող բանկերի շրջանում՝ գործառնական լիզինգ չմատուցելու պատճառները: Արդյունքները ներկայացված են գծապատկերներ 2.-ում և 3.-ում:



Գծապատկեր 2. ՀՀ առևտրային բանկերի կողմից լիզինգային ծառայություններ չմատուցելու պատճառները



Գծապատկեր 3. ՀՀ առևտրային բանկերում գործառնական լիզինգ չմատուցելու պատճառները

Իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքում պարզ է դարձել, որ գործառնական լիզինգի ծառայությունները նույնպես պահանջարկ ունեն կազմակերպությունների շրջանում: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ մասնավոր կազմակերպություններն էլ են ցանկանում նման ծառայություններ մատուցել:

Արենախոսության երրորդ՝ «ՀՀ բանկային ծառայությունների զարգացման հեռանկարները դրանց ծախսատարության նվազեցման համատեքստում» գլխում, քննարկվել են ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրվող ծառայությունների ծախսատարության ու եկամտաբերության խնդիրները, ինչպես նաև մշակվել է բանկային ծառայությունների ինքնարժեքի հաշվարկման նոր մոտեցում: Ուսումնասիրվել է

նաև նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ բանկային ծառայությունների ծախսատարության նվազեցման հնարավորությունները:

Բանկային ծառայությունների ուսումնասիրությունը թերի կլիներ առանց անդրադարձի այնպիսի մի կարևոր հարցի ինչպիսին ծառայությունների ծախսատարության և դրանց եկամտաբերության խնդիրներն են:

Այդ խնդիրների վեր հանման նպատակով իրականացրել ենք ՀՀ-ում ակտիվների մեծությամբ առաջատար երեք բանկերի կողմից մատուցվող ծառայությունների ծախսատարության և դրանցից ստացվող եկամտաբերության համեմատական վերլուծություն:

Աղյուսակ 1.

Դիֆարկվող բանկերի կողմից մատուցվող ծառայությունների ծախսատարությունը¹

Ծառայություններ	Ամերիաբանկ	Հայբիզնեսբանկ	Արդշինբանկ
1. Վարկային ծառայություններ	1	1	1
2. Ավանդային ծառայություններ	3	2	4
3. Քարտերի տրամադրում և սպասարկում	4	3	5
4. Հեռահար սպասարկման ծառայություններ	2	4	2
5. Հաշիվների սպասարկում	6	6	6
6. Փոխանցումներ	5	5	3
7. Անհատական պահատուփեր	8	8	8
8. Դրամարկղային ծառայություններ ²	7	7	7

Այնուհետև, այս ծառայությունների օգտակարությունը բանկի

¹Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ըստ յուրաքանչյուր բանկի կողմից ներկայացված ծախսատարության մեծության՝ 1 թվանիշը համապատասխանում է ամենաշատ, իսկ 8-ը՝ ամենիչ ծախսատարությանը: Ծախսատարության մեջ հաշվարկված չեն աշխատողների աշխատավարձերը:

²Դրամարկղային ծառայությունների մեջ ներառվում են նաև արտարժույթի առք ու վաճառքի հետ կապված գործարքները:

Եկամտաբերության ապահովման տեսանկյունից գնահատելու համար մեր կողմից ընտրված փորձագիտական խմբի կողմից լրացվել է տվյալ ծառայությունների զույգային համեմատության մատրիցը: Աղյուսակ 2.-ում ներկայացված է դիտարկվող 3 բանկերի տվյալ ծառայությունների ծախսատարության համեմատությունը բանկի եկամտաբերության տեսանկյունից այդ ծառայությունների կարևորության հետ:

Աղյուսակ 3.2.
Ծառայությունների ծախսատարության համեմատական գնահատականները եկամտաբերության նկատմամբ³

Ծառայություններ	Ամերիաբանկի տվյալ ծառայության		Հայրիզենբանկի տվյալ ծառայության		Արզշինբանկի տվյալ ծառայության	
	Նրախնայարտադրողից	Նրախնայարտադրողից	Նրախնայարտադրողից	Նրախնայարտադրողից	Նրախնայարտադրողից	Նրախնայարտադրողից
1. Վարկային ծառայություններ	1	1	1	1	1	1
2. Ավանդային ծառայություններ	3	5	2	4	4	6
3. Քարտերի տրամադրում և սպասարկում	4	3/4	3	2	5	3
4. Հեռահար սպասարկման ծառայություններ	2	2	4	7	2	7
5. Հաշիվների սպասարկում	6	6	6	6	6	4
6. Փոխանցումներ	5	3/4	5	3	3	2
7. Անհատական պահատուփեր	8	8	8	8	8	8
8. Դրամարկղային ծառայություններ	7	7	7	5	7	5

³Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից

Նկատելի է, որ երեք բանկերում էլ կան ծառայություններ, որոնք ծախսատարության և կարևորության տեսանկյունից գտնվում են նույն դիրքում: Մի քանի ծառայությունների գծով առկա է նվազ ծախսատարություն, քան դրանցից բանկի ստացած օգուտն է: Ծառայությունների երրորդ խմբում առավել ծախսատարությամբ և նվազ օգտակարությամբ ծառայություններն են: Դրանք են ավանդային և հեռահար սպասարկման ծառայությունները:

Բանկային ծառայությունների ծախսատարության հաշվարկման ու ոչ եկամտաբեր ծառայությունների հայտնաբերման նպատակով՝ ABC (Activity based costing) մեթոդաբանության հիման վրա մշակվել է բանկային ծառայությունների ինքնարժեքի հաշվարկման նոր մոտեցում:

Անհրաժեշտ է նշել, որ ծախսերի հաշվարկում ներառվում են՝ աշխատակիցների տրամադրված աշխատավարձերը, վարձակալական վճարները, ծրագրային ապահովման ու տեխնոլոգիաների վարձավճարները, այլ ծախսեր, որոնց շարքին են դասվում կոմունալ վարձավճարները, գրասենյակային պարագաների ձեռքբերման ծախսերը և այլն: Տրամադրվող ծառայության ինքնարժեքի հաշվարկման գործընթացում մեծ կարևորություն ունի նաև գործարքների իրակացմանը մասնակցություն ունեցող աշխատակիցների թվաքանակը:

Այս մոտեցումը թույլ կտա բանկերին բացահայտել յուրաքանչյուր գործարքի հաշվով ծառայությունների ծախսատարությունն ու ուղիներ մշակել՝ քիչ ծախսատար ու եկամտաբեր ծառայությունների ներդրման համար: Ենթադրյալ բանկի օրինակով ցույց տանք բանկի ծախսերը յուրաքանչյուր ծառայության հաշվով, որն էլ կօգնի հեշտությամբ հաշվարկել յուրաքանչյուր ծառայության ինքնարժեքը:

Աղյուսակ 3.3.

Բանկի ծախսերը՝ յուրաքանչյուր ծառայության հաշվով⁴

	Չափորոշիչները	Բանկային ծառայության տեսակը	
		Քարտերի տրամադրում և սպասարկում	Վարկային ծառայություններ
Ծառայության տրամադրման ընթացքում՝ իրականացվող գործարքների բանակի հաշվարկ	Ծառայության տրամադրման ընթացքում իրականացվող գործարքների քանակը	2	4
	Գործարքների իրականացմանը մասնակցություն ունեցող աշխատակիցների թվաքանակը	2	4
Ծախսերի հաշվարկ՝ իրականացված յուրաքանչյուր գործարքի հաշվով	Աշխատակիցների աշխատավարձը	2 աշխատակցի հաշվով՝ ամսական 240000 դրամ	4 աշխատակցի հաշվով՝ ամսական 400000 դրամ
	Վարձակալական վճարները	Ամսական 800000 դրամ	Ամսական 800000 դրամ
	Ծրագրային ապահովման ու տեխնոլոգիաների վարձավճարները	Ամսական 950000 դրամ	Ամսական 450000 դրամ
	Այլ ծախսեր	Ամսական 250000	Ամսական 250000
Ցամաքավոր ծառայության ինքնարժեքի հաշվարկ	Ընդամենը ծախսեր	Ամսական 2,240000 դրամ	Ամսական 1,900000 դրամ

Աղյուսակից տեսնում ենք , թե ինչ ծախսեր է կատարում բանկը յուրաքանչյուր ծառայություն տրամադրելիս: ՀՀ բանկերը, այս կերպով հաշվարկելով ծառայությունների ինքնարժեքը, կարող են բացահայտել առավել ծախսատար ծառայություններն ու գործարքները, քայլեր ձեռնարկել դրանց կատարելագործման կամ կրճատման ուղղությամբ:


⁴Կազմվել է հեղինակի կողմից՝ հիմնվելով ծառայությունների ինքնարժեքի հաշվարկման մոտեցման վրա

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ներքո աշխարհի բոլոր բանկերը զգալի փոփոխություններ են կրում:

Ավանդական բանկային համակարգն այսօր անցում է կատարում թվայնացված գործունեության: Տեխնոլոգիաները դառնում են ավելի մատչելի, զարգանում են ավելի արագ՝ օրեցօր միավորելով ավելի շատ մարդկանց: Այսօր ֆինանսական համակարգում արդեն հաճախ կարելի է հանդիպել այնպիսի հակացությունների, ինչպիսիք են «բաց բանկինգ»-ն ու «բլոկչեյնը»:

«ՀՀ բանկային ծառայությունների շուկայում բլոկչեյն տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններն ու արդյունավետությունը բացահայտելու նպատակով 2021 թվականի ընթացքում սոցիոլոգիական հարցումներ ենք իրականացրել Nooor Blockchain Armenia, Armenian Blockchain Forum, Blockchain R&D Hub ընկերությունների փորձագետների շրջանում⁵:

Հարցումներին մասնակցած փորձագետները միաձայն նշել են՝ «ՀՀ բանկային համակարգում հնարավոր է կիրառել բլոկչեյն տեխնոլոգիաները: Իսկ թե որ ծառայությունների մասով է կիրառությունն առավել արդյունավետ, ստացված արդյունքները ներկայացնենք ստորև բերվող գծապատկերի միջոցով:



Գծապատկեր 3.4. Փորձագետների կարծիքները՝ փոկոսային հարաբերակցությամբ⁶

«ՀՀ բանկային ծառայությունների ոլորտում բլոկչեյն տեխնոլոգիաների ներդրման ազդեցությունը գնահատելու նպատակով սոցիոլոգիական հարցումներ ու քննարկումներ են իրականացվել Nooor

⁵Զարցալեթերթիկը՝ 3 ավելված 4

⁶Կազմվել է հեղինակի կողմից՝ հարցումներից ստացված արդյունքների հիման վրա

Blockchain Armenia ընկերության փորձագետների և բանկերի համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների հետ:

Հիմք ընդունելով միջազգային մեթոդաբանություններն ու հարցումների արդյունքում հայաստանյան փորձագետներից, ՀՀ բանկերի համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցներից ստացված տեղեկատվությունը, հաշվարկել ենք ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց կողմից իրականացված միջազգային փոխանցումների համակարգում բլոկչեյն տեխնոլոգիաների ներդրման արդյունքում ստացվելիք հնարավոր եկամուտները:

Աղյուսակ 3.4.

Միջազգային փոխանցումների արդյունքում բանկի հնարավոր եկամուտները⁷

	Ցուցանիշ	Հաշվարկված բրուկցենի ներդրման առաջին տարվա համար	Հաշվարկված բրուկցենի ներդրման երկրորդ տարվա համար
1	ՀՀ բանկային համակարգի Ֆիզ. անձ հաճախորդների թվաքանակը (8)	2019	2020
		2926922	3146319
2	Մեկ անձին բաժին ընկնող փոխանցումների քանակը(9)	3	3
3	Մեկ գործարքի ինքնարժեքը(10)	1-5 դոլար	1-5 դոլար
4	1 գործարքի հաշվով գանձվող միջնորդավճարը (գանձվում է տեխնոլոգիական սպասարկման դիմաց)(11)	Գործարքի ինքնարժեքի 20%	Գործարքի ինքնարժեքի 20%
5	1 գործարքի հաշվով տարեկան 2% վճարի կրճատում (գանձվում է տեխնոլոգիական սպասարկման դիմաց)(12)	100%	98%
6	Եկամուտը մեկ գործարքի հաշվով(13)	20%	19,6%
7	Ընդհանուր եկամուտը(14)	176-878 մլն դոլար	185-925 մլն դոլար

*** Ծանոթություններ**

8) Վերցվել է ՀՀ բանկերի միության վերլուծություններից, և եթե մեկ հաճախորդն ունի հաշիվներ մեկից ավելի բանկերում, նույնքան անգամ էլ ներառվել է հաշվարկում:

9) Հաշվարկվել է՝ հիմք ընդունելով մասնագետներից ստացված արդյունքները:

10) Գնահատվել է բանկերի համապատասխան մասնագետների կողմից՝ հաշվի առնելով տեխնոլոգիական սպասարկման տեսակը:

⁷ Կազմվել է հեղինակի կողմից՝ հիմնվելով բրուկցեն տեխնոլոգիաների արդյունավետության գնահատման ամերիկյան մեթոդաբանության վրա ու այն հարմարեցնելով ՀՀ բանկային համակարգին

11) Հաշվարկվել է փորձագետների կողմից:

12) Հաշվարկվել է փորձագետների կողմից:

13) Հաշվարկվում է՝ 1 գործարքի հաշվով գանձվող միջնորդավճարը (գանձվում է տեխնոլոգիական սպասարկման դիմաց) բազմապատկելով 1 գործարքի հաշվով տարեկան 2% վճարի կրճատումով (գանձվում է տեխնոլոգիական սպասարկման դիմաց) և ստացված արդյունքը բաժանելով 100-ի :

14) Հաշվարկվում է՝ ՀՀ բանկային համակարգի Ֆիզ. անձ հաճախորդների թվաքանակը բազմապատկելով մեկ անձին բաժին ընկնող փոխանցումների քանակով, մեկ գործարքի ինքնաթիթքով և մեկ գործարքի հաշվով ստացվելիք եկամտով

Յուրաքանչյուր տարի 2%-ով կրճատվում է 1 գործարքի հաշվով տարեկան վճարի չափը՝ ի հաշիվ հաճախորդների թվաքանակի ավելացման, արդյունքում, իրականացված հաշվարկներից պարզ է դառնում՝ նորարարական բյուջեյն տեխնոլոգիաների կիրառությունը միջազգային բանկային փոխանցումների համակարգում դրական ազդեցություն կունենա ՀՀ բանկային համակարգի վրա՝ մեծացնելով գործարքները ստացվող եկամուտները: Համաձայն փորձագետների կարծիքների՝ բյուջեյն տեխնոլոգիաների ներդրումը ոչ միայն կավելացնի բանկի եկամուտները, այլ նաև էականորեն կկրճատի գործարքների տևողությունը՝ այն դարձնելով հարմարավետ նաև հաճախորդների համար:

Չնայած այն հանգամանքին, որ բյուջեյն տեխնոլոգիաների կիրառությունը բանկային ոլորտում ակտիվ զարգացում է ապրում ամբողջ աշխարհում, ՀՀ բանկերն այն դեռևս չեն կիրառում: Քանի որ բանկային ոլորտը շատ նորարարական ու դինամիկ զարգացող է, ապա չի կարելի անտեսել տեխնոլոգիական այս նորամուծությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը ներկայումս ունի բյուջեյն տեխնոլոգիաների ներդրման և զարգացման համար անհնարժեշտ մարդկային, էներգետիկ և տեխնոլոգիական բոլոր անհրաժեշտ ռեսուրսները, ինչպես նաև հիմք ընդունելով կատարված ուսումնասիրությունների արդյունքները՝ կարելի է վստահորեն ասել, որ ՀՀ բանկային ոլորտում բյուջեյնի կիրառությունը նոր շունչ կհաղորդի ավանդական բանկային ծառայությունների շուկային՝ առկա պահանջարկը բավարարող որակյալ ու կատարելագործված ծառայություններ առաջարկելով:

Ատենախոսության **«Եզրակացություններ և առաջարկություններ»** բաժնում ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները: Դրանք են.

- 1) Իրենց գործունեության ընթացքում ՀՀ բանկերը նույնպես առնչվում են դիսկերի (ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ոլորտները) բացահայտման, գնահատման ու կառավարման

հիմնախնդրի հետ: Ռիսկերի բացասական ազդեցությունը չեզոքացնելու նպատակով բանկերն իրականացնում են մի շարք գործողություններ, ինչպիսիք են՝ ռիսկի ազդեցության նվազեցումը, բանկի կապիտալի մեծացումը կամ ռիսկի կառավարման գործընթացի ամրապնդումը: ՀՀ ԿԲ-ն շարունակում է մշակել ու կատարելագործել ռիսկերի գնահատման ու կառավարման այնպիսի մեխանիզմներ, որոնք թույլ կտան ժամանակին հայտնաբերել ու հուսալիորեն կարգավորելով՝ նվազագույնի հասցնել ռիսկերը:

- 2) Սոցիոլոգիական հարցման արդյունքները վկայում են, որ բանկերի կողմից լիզինգային ծառայություններ չմատուցելու հիմնական պատճառներից են շուկայի փոքրությունը՝ 47,06%, ու օրենսդրական դաշտի անկատարությունը 41,18%, իսկ կազմակերպությունները լիզինգային ծառայություններից չօգտվելը պատճառաբանեցին գործող բարձր տոկոսադրույքներով ու գույքը միայն վարձակալելու ցանկությամբ (պատասխաններում բարձր տոկոսադրույքների մասնաբաժինը կազմել է 42,97%, իսկ գույքը միայն վարձակալելու ցանկությամբ՝ 46,87%): Վերջինս, ըստ էության իրենից ներկայացնում է գործառնական լիզինգը, որը մեր երկրի օրենսդրությամբ չի կարգավորվում և բանկերի ու մասնագիտացված կազմակերպությունների կողմից չի մատուցվում: Այսպիսով, ոլորտում առկա բացթողումները շտկելու ու իրկանացվող գործառնությունների տեսականին ընդլայնելու համար անհրաժեշտ են համապատասխան օրենսդրական կարգավորումներ, որոնք թույլ կտան բարձրացնել գործառնությունների հարմարավետությունն ու կբավարարեն առանձին ծառայությունների հանդեպ շուկայում ձևավորված պահանջարկը:
- 3) Իրականացվել է ՀՀ բանկային ոլորտում ակտիվների մեծությամբ առաջատար երեք բանկերի համար ծառայությունների ծախսատարության և դրանցից ստացվող եկամտաբերության վերլուծություն: Արդյունքում, բացահայտվել է, որ տվյալ երեք բանկերի կողմից մատուցված որոշ ծառայություններ ծախսատարության և եկամտաբերության տեսանկյունից գտնվում են նույն դիրքում: Դրանք են վարկային ծառայություններն ու անհատական պահատուփերի տրամադրումը: Մի քանի ծառայությունների գծով արձանագրել ենք նվազ ծախսատարություն, քան դրանցից բանկի ստացած եկամուտն է: Դրանց թվին են պատկանում քարտերի

տրամադրման ու սպասարկման, հաշիվների սպասարկման, բանկային փոխանցումների, ինչպես նաև դրամարկղային ծառայությունների: Ծառայությունների երրորդ խումբը, որ առանձնացվել է մեր կողմից, աչքի է ընկնում առավել ծախսատարությամբ և նվազ եկամտաբերությամբ: Դրանք են ավանդային և հեռահար սպասարկման ծառայությունները: Այսպիսով, բանկային ծառայությունների ծախսատարության հաշվարկման ու ոչ եկամտաբեր ծառայությունների հայտնաբերման նպատակով՝ ABC մեթոդաբանության հիման վրա մշակվել է բանկային ծառայությունների ինքնարժեքի հաշվարկման նոր մոտեցում, որի կիրառությունը հնարավորություն կտա բանկերին հաշվարկել յուրաքանչյուր ծառայության ինքնարժեքը՝ բացահայտելով առավել ծախսատարներն ու քայլեր ձեռնարկել դրանց ծախսատարության նվազեցման ուղղությամբ:

- 4) Իրենց հաճախորդներին չկորցնելու համար բանկերն այսօր ստիպված են մշտապես մշակել ու կատարելագործել տրամադրվող հեռահար ու առցանց ծառայությունները: Մեր կողմից իրականացրած հետազոտությունների արդյունքում բացահայտել ենք, որ եվրոպական մի շարք խոշոր բանկեր գտել են թվային միջավայրում իրենց դիրքն ամրապնդելու լավագույն տարբերակը, այն է՝ բլոկչեյն տեխնոլոգիաների ու բաց API-ների ներդրումն ու անցումը բաց բանկինգին: Առանձնակի ուշադրության են արժանի այս նորարարական տեխնոլոգիաների առավելություններն ու ընձեռած հնարավորությունները: Ուսումնասիրությունների արդյունքում պարզել ենք որ բաց API-ների շնորհիվ հաճախորդները կկարողանան կառավարել իրենց բոլոր հաշիվներն առցանց կամ սմարթֆոնների հավելվածների (APP-ների) միջոցով: Դրանք կարող են հաճախորդներին օգնել խուսափել ծախսերից, թույլ կտան խնայել իրենց դրամական միջոցները, ինչպես նաև առցանց (online) վճարումները կդարձնեն ավելի արագ, մատչելի և ապահով: Ուսումնասիրելով բլոկչեյն տեխնոլոգիաների առանձնահատկությունները՝ բացահայտել ենք, որ դրանց ներդրումը կլուծի բանկերի մի շարք կարևորագույն խնդիրներ, ինչպես նաև կբարելավվի ավանդական բանկային ծառայությունների շուկան: Հնարավոր կլինի կրճատել գործարքների համար գանձվող միջնորդավճարները, կավելանա գործարքների իրականացման արագությունն ու կմեծանան

եկամտի ծավալները: ՀՀ-ում բլոկչեյն տեխնոլոգիաների զարգացմամբ զբաղվող ընկերությունների փորձագետների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցումների միջոցով պարզվել է, թե ՀՀ բանկային համակարգում որ ծառայությունների մասով է տեխնոլոգիաների կիրառությունն առավել արդյունավետ, և հետաքրքրված են արդյոք ՀՀ-ում գործող բանկերը նորորարական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններով: Միջազգային մեթոդաբանության հիման վրա իրականացրած հաշվարկներով ցույց է տրվել ՀՀ բանկային համակարգում բլոկչեյն տեխնոլոգիաների ներդրման արդյունքում ստացվելիք հնարավոր եկամուտները: Ներկայում՝ բանկային համակարգի զարգացման խիստ մրցակցության պայմաններում, բանկերի համար չափազանց կարևոր է նորարարական բաղադրիչով ծառայությունների ներդրումը: Հաշվի առնելով բոլոր առավելություններն ու հնարավորությունները, ինչպես նաև ՀՀ բանկային համակարգի ու բանկային ծառայությունների բարեփոխման ու կատարելագործման մեկնարկային կետ համարելով միջազգային և հայ փորձագետների հետազոտություններից ստացված արդյունքները, կարծում ենք, որ ՀՀ բանկերը պետք է մշակեն վերոնշյալ նորարարական տեխնոլոգիաների տեղայնացման հնարավոր տարբերակներ:

Վերլուծելով բանկային ծառայությունների տեսակները, դրանցում առկա առավելություններն ու թերությունները, նոր բանկային ծառայությունների և նորարարական տեխնոլոգիաների տեղայնացման հնարավորությունները՝ կարելի է եզրակացնել, որ առենախոսությունում ներկայացված դրույթները կօգնեն ՀՀ-ում գործող բանկերին ընդլայնել մատուցվող ծառայությունների տեսակները և դրանք տեղափոխել որակական նոր հարթություն: Ներկայացված գաղափարները կարող են օգտակար լինել նաև թեմայի հետագա զարգացման համար:

Առենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ տպագրված աշխատություններում.

- 1) Շահինյան Տ., «Բանկային ծառայությունների տնտեսական բովանդակությունն ու դերը ժամանակակից առևտրային բանկերում», «Սոցիալ տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»,

- գիտական հոդվածների ժողովածու-2018, Մաս 1, Երևան 2018թ., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, էջ 192-201
- 2) Շահինյան Ս., «ՀՀ բանկային ոլորտի ընդհանուր նկարագիրը», «Սոցիալ տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», գիտական հոդվածների ժողովածու-2018, Մաս 1, Երևան 2018թ., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, էջ 201-209
 - 3) Շահինյան Ս., «Բանկերի և բանկային ծառայությունների առաջացման ու զարգացման միջազգային փորձը», «Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ» (Պարբերական գիտական ժողովածու), Գիրք 11, Երևան 2018թ., «ՕՐ-ԴԱՐ» հրատարակչություն, էջ 140-147
 - 4) Շահինյան Ս., «Առևտրային բանկերի ակտիվային և պասիվային գործառնությունների վերլուծություններն ու դրանց կատարելագործման ուղիները», «Ֆինանսներ և էկոնոմիկա», համար 3-4 (211-212), Երևան 2018թ., էջ 18-21
 - 5) Шагинян Т., “Основные риски, возникающие в банковской системе”, “Научно-практический электронный журнал Аллея Науки” №4(20), (том 3), Апрель 2018 г., с. 223-227
 - 6) Шагинян Т., “Тенденции развития банковских услуг в РА“, Сборник статей Международной научно-практической конференции, г. Москва 16 сентября 2018 г., Европейский фонд инновационного развития, с. 48-52
 - 7) Շահինյան Ս., «Բլոկչեյն տեխնոլոգիաների կիրառման հեռանկարները ՀՀ բանկային ծառայությունների ոլորտում», «Ֆինանսներ և էկոնոմիկա», համար 5-6 (213-214), Երևան 2018թ., էջ 55-58
 - 8) Շահինյան Ս., «Լիզինգային գործառնությունների առանձնահատկություններն ու զարգացման հեռանկարները ՀՀ-ում», «Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես, 2018, №3, Երևան 2018թ., էջ 198-205
 - 9) Շահինյան Ս., «ՀՀ բանկերի կողմից մատուցվող ծառայությունների գնահատումը ծախս-արդյունք մեթոդի կիրառմամբ», «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» գիտ.հոդվածների ժողովածու (Գիրքը նվիրվում է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 75-ամյակին, 1943-2018) / ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ: Պատ. խմբագիր՝ Վ. Լ. Հարությունյան, -եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, էջ 102-110

- 10) Шагинян Т., “Перспективы применения технологии Blockchain в банковской сфере“, Современная экономика: Актуальные вопросы, достижения и инновации, сборник статей XXXII Международной научно-практической конференции, Состоявшейся 25 ноября 2019 г. в г. Пенза, с. 42-45
- 11) Шагинян Т., “ Open Banking как драйвер развития банковской системы“, World science: Problems and innovations, сборник статей XXXVII Международной научно-практической конференции Состоявшейся 30 ноября 2019г. в г. Пенза, с. 142-145
- 12) Шагинян Т., “ Безналичные операции как мера в борьбе с коронавирусом“, Экономика предприятий, регионов, стран: Актуальные вопросы и современные аспекты; сборник статей Международной научно-практической конференции, Состоявшейся 15 августа 2020 г. в г. Пенза, с. 33-36
- 13) Հարությունյան Վ., Շահինյան Տ., «COVID-19-ի ազդեցությունը ՀՀ բանկային համակարգի վրա», «Այլընտրանք» գիտական հանդես, Եր., 2021, № 2, Երևան 2021թ., էջ 361-367
- 14) Шагинян Т., “COVID 19 и цифровизации банков“, European research, Сборник статей XXXIII Международной научно-практической конференции, Состоявшейся 7 октября 2021г. в г. Пенза, с. 104-107

ШАГИНЯН ТАТЕВИК ВАЗГЕНОВНА
ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ БАНКОВСКИХ УСЛУГ В РЕСПУБЛИКЕ
АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности

08.00.03 – “Финансы, бухгалтерский учет”.

Защита диссертации состоится 19-ого мая 2022г. в 14:00, на заседании Специализированного совета 014 ВАК Республики Армения по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г. Ереван, ул. М. Налбандяна 128

РЕЗЮМЕ

Нынешнее состояние рынка банковских услуг и его структурное развитие определяют банковскую систему как важную составляющую экономики, которая играет ведущую роль в повышении экономического потенциала страны.

Постоянно растущая конкуренция на внутреннем и международном банковских рынках требует от банков изменения своих стандартов деятельности. В нынешних условиях экономической ситуации одним из наиболее важных путей усовершенствования банковской деятельности является развитие новых услуг.

За последнее десятилетие банковский сектор зафиксировал значительные темпы роста, что, в свою очередь, дает возможность значительно увеличить ассортимент банковских услуг, предлагаемых клиентам.

Стабильное экономическое развитие страны невозможно представить без использования инновационных услуг в банковской системе.

Внедрение инновационных банковских услуг и развитие существующих услуг являются ключевыми источниками роста банковских доходов, а также и удовлетворенности потребностей клиентов.

Цель диссертации и задачи: Основная цель диссертации - изучить банковские услуги Республики Армения и перспективы их развития в контексте расширения спектра услуг и снижения их себестоимости.

Для достижения указанной цели были поставлены следующие задачи:

- Уточнить экономическое содержание банковских услуг, их роль и значение в экономике РА на основе профессиональной литературы, а также существующих анализов.
- В результате исследования основных финансовых показателей банковского сектора Армении выявить эффективность мер, принимаемых Центральным банком Армении по стабилизации банков.
- Обсудить пути реформирования банковской системы РА на основе изучения международного опыта формирования и развития банковских услуг.

- На основе обсуждения и анализа характера, активных и пассивных операций коммерческих банков рассмотреть возможные пути их совершенствования.
- Рассмотреть стратегические подходы Центрального банка РА к управлению рисками на основе выявления и исследования основных рисков, возникающих в банковской системе РА.
- Предложить новые подходы к совершенствованию предоставляемых услуг на основе исследований лизинговых и факторинговых услуг, предоставляемых армянскими банками, а также проведенных нами социологических опросов.
- Представить преимущества внедрения инновационных технологий блокчейн и открытый банкинг и обосновать необходимость применения инновационных технологий в улучшении и развитии банковских услуг.

Научная новизна диссертации:

- ✓ В 17 коммерческих банках РА, а также на 384 предприятиях на основе социологических опросов был изучен спрос на лизинг, в частности, операционный лизинг на рынке, выявлены пробелы на рынке для его внедрения, и по результатам были предложены пути регулирования сферы.
- ✓ На основе сравнительного анализа себестоимости услуг и доходность от них выявлены отклонения в трех ведущих банках по размеру активов в банковском секторе Армении, а также для их исправления был разработан новый подход по расчету себестоимости банковских услуг.
- ✓ На основе комплексного изучения мирового опыта предоставления банковских услуг обоснована целесообразность внедрения инновационных технологий в контексте снижения себестоимости и повышения прибыльности услуг, предоставляющихся армянскими банками

SHAHINYAN TATEVIK VAZGEN

PROSPECTS OF BANKING SERVICES DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

The dissertation is submitted for pursuing of scientific degree of PhD of economic sciences in the field 08.00.03 “Finance, accounting”

The defense of the dissertation will take place on May 19, 2022, at 14:00, at the Meeting of the Specialized Council 014 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Armenian State University of Economics, by address: 0025, Yerevan, 128 M. Nalbandyan st.

ABSTRACT

The current state of the banking services market and its structural development determine the banking system as an important component of the economy, which plays a leading role in increasing the country's economic potential.

The constantly growing competition in the domestic and international banking markets requires banks to change their standards of activity. In the current economic situation, one of the most important ways to improve banking activities is the development of new services.

Over the past decade, the banking sector has recorded significant growth rates, which, in turn, provides an opportunity to significantly increase the range of banking services offered to customers.

It is impossible to imagine stable economic development of the country without the use of innovative services in the banking system.

The introduction of innovative banking services and the development of existing services are key sources of growth in banking income, as well as customer satisfaction.

Purpose and objectives of the dissertation: The main purpose of the dissertation is to study banking services in the Republic of Armenia and the prospects for their development in the context of expanding the range of services and reducing their cost price.

In order to achieve this purpose, the following objectives were set:

- Clarify the economic content of banking services, their role and importance in the RA economy on the basis of professional literature and existing analyzes.
- As a result of the study of the main financial indicators of the banking sector in Armenia, to reveal the effectiveness of measures taken by the Central Bank of Armenia to stabilize banks.

- Discuss the ways of reforming the banking system of the Republic of Armenia on the basis of studying international experience in the formation and development of banking services.
- Based on the discussion and analysis of the nature, active and passive operations of commercial banks, consider possible ways to improve them.
- Discuss the strategic approaches of the Central Bank of the Republic of Armenia to risk management based on the identification and research of the main risks arising in the banking system of the Republic of Armenia.
- To propose new approaches to improving the services provided on the basis of research on leasing and factoring services provided by Armenian banks, as well as our sociological surveys.
- To present the benefits of using innovative blockchain technologies and open banking and substantiate the need to use innovative technologies in improving and developing banking services.

The scientific novelty of the dissertation:

- ✓ In 17 commercial banks of the Republic of Armenia, as well as in 384 enterprises, on the basis of sociological surveys, the demand for leasing was studied, in particular, operational leasing in the market, gaps in the market for its implementation were identified, and based on the results, were suggested ways of regulating the sphere.
- ✓ Based on a comparative analysis of the cost price of services and their profitability, deviations in the three leading banks in terms of the size of assets in the banking sector of Armenia were revealed, and a new approach was developed for calculating the cost price of banking services to correct them.
- ✓ Based on a comprehensive study of the world experience in the provision of banking services, the feasibility of introducing innovative technologies in the context of reducing the cost price and increasing the profitability of services provided by Armenian banks is substantiated.

